սիպեալ է սպասել։ Կուսակալն ասէ, զարմանք, Խօսաքեանն և Ճարտարապետն աւարտեալ զպաշտօնս իւրեանց՝ առին զգրեանս եւ մեկնեցան անտի, Մուվէլլայն սպասէ թէ տակաւին գործն թերի՛ է՝ այլ եւս զի՞նչ խնդրիք։ վարդապետք ասեն, ըստ հրամանի արքային եւ հաճութեան՝ երկուց ազգաց 'ի դատաստանին Հայք եւս բաժանորդ լինել ընդ Ցունաց յորոշեալ տեղիս, երկարեցան բանք 'ի վերայ այսր խնդրոյ իբր կէս ժամ։ Կուսակալն ասէ՝ իրաւունքն 'ի ձեռս Ցունաց է, զի յառաջագոյն 'ի դատին ընդ Լատինս ցուցին ինձ զդաշնագիրն Օմարայ և զՍէլիմայ հրովարտակն, զորս դուք ոչ ունիք։ Վարդապետք, 'ի մեծի դատին առաջի Դենպետին և Նախարարաց 'ի Ժողովի անդ ընթերցան զայնոսիկ, եւ ըստ այնմ գրեցաւ Իլամ և տուաւ Արքայի, և ել ապա արտաքս նշանակեալ կարմրադեղով տալ հրովարտակ երկուց ազգաց ըստ մտաց եւ 'ի նոսին բովանդակեցան բանք հրովարտակացն Սէլիմայ, եւ Հայք ըստ մտաց նորին Իլամին պահանջեն։ սակայն ոմանք ագահութեամբ միոյ կողման պաշտպան եղեն ընդդէմ հրովարտակին, եւ միւսոյ կողման բռնութեամբ պատասխանեցին։ այլ դուք որ երեք թուղով Վեզիր և Իշխան գաւառիս էք և մին 'ի պալատականաց Արքայի, յուսամք թէ առաւել փոյթ տանիք 'ի կատարումն եւ 'ի գործադրութիւն Կայսերական հրամանին՝ զի Հայք եւս հպատակ են Տէրութեան։ Ապա եհարց թէ ո՞րպէս եղեւ քննութիւնն՝ և որոշումն ո՞ւր եղերեցաւ։ Ասացին՝ առաջի բազմութեան այլազգեաց, և գրեցաւ, և մեք եւս 'ի զննին կայաք ընդ այլոց, եւ յորժամ կամեցաք լինել վերահասու, ասացին, թէ չէ պարտ գիտել ձեզ նախ քան զառաքելն զայն առ Տէրութիւնն և գալ պատասխանի նորին։ Կուսակալն, եթէ այդպէս է զի՞նչ արարիք 'ի Ս. Ցարութիւն։ Ասացին, զկնի շինութեան Տաճարին այնորիկ, ոչ էին կախեալ պատկերք և կանթեղք մեր, այժմ զնոսա միայն կարգաւորեցաք։ սակայն ունիմք տակաւին պակասութիւն բազում անդ։ իսկ 'ի Բեթղեհէմ և 'ի Ս. Աստուածածին յուսամք թէ հրամանաւ մեծութեան ձերոյ կատարին ամենեքեան։ Քարտուղարն ասէ՝ որո՞յ հրամանաւ կախեցան կանթեղքն և պատկերքն այնոքիկ։